ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 5, 1953 Общественные науки

Ս. Մանուկյան, Խ. Գյուլնազարյան

ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՊԱՅՔԱՐԸ ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՆԱՑԻՈՆԱԼԻԶՄԻ ԴԵՄ

Պրոլետարական գրականությունը, այդ թվում և հայ պրոլետարական գրականությունը, իր սկզբնավորման առաջին իսկ օրերից կոփվել ու զարգացել է մարքսիզմ-լենինիզմին խորթ, բուրժուական նացիոնալիստական տարբեր հոսանքների և իդեոլոգիաների դեմ մղած անհաշտ ու սկզբունքային պայքարի բովում։

Այդ գրականությունը ղեկավարվել է գրականության պարտիականության մարքսիստական սկզբունքով։ Նրա ոգուն խորթ է եղել նացիոնալիզմը, որով մինչև ուղն ու ծուծը տոգորված է բուրժուական գրականությունը։

Խոսելով գրականության պարտիականության մասին, դեռևս 1905 թ. Վ. Ի. Լենինը գրել է. «Գրական գործը պետք է դառնա համապրոլետարական գործի մի մասը, սոցիալ-դեմոկրատական այն մեկ միասնական, մեծ մեխանիզմի «անվակն ու պտուտակիկը», որ շարժման մեջ է դրվում ամբողջ բանվոր դասակարգի ամբողջ գիտակից ավանգարդի կողմից։ Գրական գործը պետք է կազմակերպված, պլանաչափ, միացյալ սոցիալ-դեմոկրատական պարտիական աշխատանքի մի բաղկացուցիչ մասը դառնա»[1]։

Լենինի այս հանճարեղ դրույթի լույսի տակ միանգամայն հասկանալի է դառնում պրոլետարական ռևոլյուցիայի էպոխայի մեծ գրողների՝ Մ. Գորկու, Վ. Մայակովսկու, ինչպես նաև Հ. Հակոբյանի ստեղծագործության ողջ նպատակասլացությունը, սոցիալիստական ռեալիզմի գրականության գաղափարական հագեցվածությունն ու ռևոլյուցիոն պաթոսը։

Պատահական չէ, որ հայ պրոլետարական գրականության հիմնադիր Հ. Հակոբյանի ստեղծագործությունն իր ողջ էությամբ հագեցված է պրոլետարական ինտերնացիոնալիզմի գաղափարով։ Ծառայել է ռևոլյուցիայի մեծ գործին, որպես այդ խոշոր համապրոլետարական գործի մի «անվակն ու պտուտակիկը»։

Դուրս գալով աշխատավոր ժողովրդի ծոցից Հ. Հակոբյանը վաղ հասակից զգացել է ցարական բռնակալական ռեժիմի ողջ ծանրությունը։ Դեռ պատանության տարիներին ծանոթանալով ռուս խոշորագույն ռևոլյուցիոն-դեմոկրատներ Չերնիշևսկու, Դոբրոլյուբովի, Նեկրասովի և նրանց գաղափարական զինակից Մ. Նալբանդյանի ստեղծագործություններին, Հ. Հակոբյանը լցվել է նրանց ազատասիրական գաղափարներով, բուռն ատելությամբ է լցվել ցարական բռնապետության դեմ։ Այդ ատելությունը իր արտահայտությունն է գտել նոր ձևավորվող պոետի առաջին իսկ ոտանավորների մեջ։ 1888 թ. սեպտեմբերին գրված «Արծիվին» անտիպ բանաստեղծության մեջ Հ. Հակոբյանը, խոսքն ուղղելով ռուսական միապետին, գրում է.

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 10, էջ 40։

Իրավունքը քոնն է,
Այս ինչ չար կատակ,
Բայց դիտցիր, որ հեռու չէ
Եվ քեզնից դանակ[1]։

Խոսելով ռուս ռևոլյուցիոն-դեմոկրատների մարտական զինակից Մ. Նալբանդյանի մասին, իր «Ազատն աստվածը» ինքնակենսագրական պատմվածքում, որը գրված է Մ. Նալբանդյանի մահվան 50-ամյակի առթիվ և տպագրվել է 1916 թ. «Պայքար» թերթում[2], Հ. Հակոբյանը շեշտում է, թե որքան մեծ է եղել Մ. Նալբանդյանի ազդեցությունն իր վրա։ Լսելով «Երգ ազատության»-ը,— ասում է նա «առաջին անգամ զգացի, որ բացվեց հոգուս աչքը, որ մեկը թելադրեց սիրել ազատությունը, ներշնչվել նրա վերամբարձ գեղեցկությամբ ու հմայքով»։ Այնուհետև Հ. Հակոբյանը նշում է, որ Մ. Նալբանդյանի ազատատենչ երգը թափանցել է իր պատանյակ հոգու խորքը «այլևս այնտեղից դուրս չդալու՝ մինչև այն օրը, երբ առաջին անգամ առնական հասակիս սկսեցի երգել միջազգային ինտերնացիոնալը»։

Խոսելով Մ. Նալբանդյանի բոցաշունչ բանաստեղծության և հռչակավոր «Ինտերնացիոնալ»-ի մասին, Հ. Հակոբյանը սքանչելի կերպով գծում է իր անցած ուղին՝ ազատասիրական դեմոկրատական դալափարներից մինչև մարքսիզմ, մինչև ռևոլյուցիոն պրոլետարիատի, կոմունիստական պարտիայի դիրքերն անցնելը։

Իսկ որո՞նք էին այն պայմանները, որ հող ստեղծեցին Հ. Հակոբյանի համար՝ ընդմիշտ կանգնելու պրոլետարական ռևոլյուցիայի դրոշի տակ, երգելու ռևոլյուցիոն պայքարն ու նրա մոտալուտ հաղթանակը, անհաշտ պայքար հայտարարելով բուրժուա-նացիոնալիստական իդեոլոգիայի ամեն տիպի դրսևորումների դեմ։

19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին Ռուսաստանում և Անդրկովկասում ավելի ու ավելի է զարգանում կապիտալիզմը և դրա հետ միասին ռևոլյուցիոն պրոլետարիատը։

Անդրկովկասում, մասնավորապես Բաքվում և Թիֆլիսում, ընկեր Ստալինի ղեկավարությամբ կազմակերպվում են բանվոր դասակարգի ռևոլյուցիոն շարժումը գլխավորող սոցիալ-դեմոկրատական բանվորական կազմակերպություններ։ Հայ ժողովրդի պատմության մեջ սկսվում է նոր էտապ։ Եվ ահա, հետամնաց Գանձակից աշխատանք որոնելու համար Թիֆլիս, ապա և Բաքու մեկնած Հ. Հակոբյանը ընկնում է ռևոլյուցիոն շարժումների բովի մեջ, ծանոթանում բանվոր դասակարգի կյանքին և պայքարին։

1904 թ. մտնելով բոլշևիկյան պարտիայի շարքերը, ներգրավվելով ռևոլյուցիոն շարժման մեջ, Հ. Հակոբյանը լիովին գիտակցում է, որ պրոլետարիատի ազատագրության միակ ուղին ռևոլյուցիայի ուղին է և անվերապահորեն իրեն նվիրում է այդ վեհ գործին։

Այդ ժամանակից սկսած Հ. Հակոբյանի պոեզիան դառնում է ցարական ինքնակալության և բուրժուա-նացիոնալիստական պարտիաների դեմ Անդրկովկասի բոլշևիկների մղած անհաշտ պայքարի մի օղակը։

---

[1] Գրական թանգարան, Հ. Հակոբյանի արխիվ, № 17։

[2] Պատմվածքի նյութը վերցված է հեղինակի բազմահատոր հիշատակարաններից գրված 1884—1894 թթ.։

1905—1907 թթ., երբ ռևոլյուցիայի հզոր թափից սարսափած ցարական ինքնակալությունը իր ստոր գործակալների՝ տարբեր ազգերի բուրժուա-նացիոնալիստական պարտիաների աջակցությամբ ազգային թշնամանք էր հրահրում ժողովուրդների միջև, մասսաների ուշադրությունը ռևոլյուցիոն պայքարից շեղելու նպատակով կազմակերպում էր սև-հարյուրյակային ջարդեր ու ազգամիջյան կոտորածներ, Անդրկովկասի բոլշևիկներն անհաշտ պայքար էին մղում բուրժուական նացիոնալիզմի դեմ, մասսաներին դաստիարակում էին պրոլետարական ինտերնացիոնալիզմի բարձր գաղափարներով, մերկացնելով ցարական ինքնակալության և բուրժուազիայի արյունարբու էությունը, լայնորեն պրոպագանդում Ռուսաստանի ամբողջ բանվոր դասակարգի միասնական ռևոլյուցիոն պայքարի անհրաժեշտությունը։

Ընկեր Ստալինը «Ինչպես է հասկանում սոցիալ-դեմոկրատիան ազգային հարցը» աշխատության մեջ, խոսելով ֆեդերալիստ սոցիալ-դեմոկրատների, այդ թվում նաև «Հայկական սոցիալ-դեմոկրատական բանվորական կազմակերպության» հակապրոլետարական-շովինիստական էության մասին, ցույց է տալիս, որ հայ պրոլետարիատի շահերը, երբեք չեն կարող նույնանալ հայ բուրժուազիայի և հոգևորականության շահերի հետ, որ ռևոլյուցիոն պրոլետարիատը, այդ թվում նաև հայ պրոլետարիատը, հաղթանակի կարող է հասնել միայն համախմբվելով համառուսաստանյան պրոլետարիատի միասնական բանակում. «Ռուսաստանյան պրոլետարիատը,— գրում է ընկեր Ստալինը,— վաղուց է սկսել խոսել պայքարի մասին։ Ինչպես հայտնի է, ամեն մի պայքարի նպատակը հաղթությունն է։ Բայց պրոլետարիատի հաղթության համար անհրաժեշտ է բոլոր բանվորների միավորումը առանց ազգության խտրության։ Պարզ է, որ ազգային միջնորմների խորտակումը և ռուս, վրացի, հայ, լեհ, հրեա և այլ պրոլետարների սերտ համախմբումը ռուսաստանյան պրոլետարիատի հաղթության անհրաժեշտ պայմանն է»[1]։

Անդրկովկասի բոլշևիկները, այդ թվում Ստեփան Շահումյանը, Սուրեն Սպանդարյանը և մյուսները անհաշտ ու անողոք պայքար են հայտարարում բուրժուա-նացիոնալիստական գաղափարների դեմ նաև հայ իրականության մեջ։ «Բրձոլա», «Պրոլետարիատի կռիվը», «Կայծ», «Նոր խոսք» և ուրիշ թերթերի էջերում և առանձին աշխատությունների մեջ հայ բոլշևիկները պաշտպանում են պրոլետարիատի իրավունքներն ու շահերը, հակառակ հայ ֆեդերալիստների՝ այդ հայ «բունդականների», ցույց տալիս, որ հայ պրոլետարիատն ու բուրժուազիան չունեն և չեն կարող ունենալ նույն շահերը։

Բուրժուական նացիոնալիզմի դեմ մղվող այդ անհաշտ ու հետևողական պայքարի հզոր զենքերից մեկն էլ դառնում է պրոլետարական, ռևոլյուցիոն գրականությունը, որի մի օղակն էր հայ պրոլետարական գրականությունը։ Հայտնի է, թե Ստ. Շահումյանը, Ս. Սպանդարյանը և մյուսները որպիսի ջերմ հոգատարությամբ են շրջապատել այդ գրականության հիմնադիր, բոլշևիկ բանաստեղծ և ռևոլյուցիայի անձնվեր զինվոր Հակոբ Հակոբյանին, միշտ և ամենուրեք ուղղություն տալով նրա ստեղծագործությանը։

Ձևավորվելով որպես ռևոլյուցիոն պրոլետարիատի, հայ բանվորության «ցավերի և ուրախությունների արտահայտիչը, նրանց աշխատանքի և կռվի երգիչը» (Ստ. Շահումյան), թե՛ որպես բանաստեղծ, թե՛ որպես ռևոլյուցիա-

[1] Ի. Վ. Ստալին, Երկեր, հ. 1, էջ 40։

յի անձնվեր մարտիկ, Հ. Հակոբյանն իր ողջ գիտակցական կյանքում անհաշտ ու հետևողական պայքար է մղել բռնակալ ցարիզմի և նրա կովկասյան սատրապների՝ հայկական, վրացական ու ադրբեջանական կոնտրռևոլյուցիոն ուժերի, բուրժուա-նացիոնալիստական պարտիաների ու հոսանքների դեմ։ Հ. Հակոբյանն առաջինն է մեր իրականության մեջ, որ իր գեղարվեստական ստեղծագործություններում բոլշևիկյան գիրքերից պաշտպանել է պրոլետարիատի միասնական պայքարի իդեան, բարձրացրել է պրոլետարական ինտերնացիոնալիզմի թեման, պրոպագանդել ազգերի իրավահավասարության և ինքնորոշման լենինյան-ստալինյան քաղաքականությունը։

Իր հռչակավոր ռևոլյուցիոն բանաստեղծություններով և հրապարակախոսական կրակոտ հոդվածներով, հակառակ հայ նացիոնալիստական ռեակցիոն բուրժուական գրչակների «ազգասիրական» ողբերին և հայդուկային կոչերին, դիմելով Ռուսաստանի բանվոր դասակարգին, առանց ազգային խտրության, Հ. Հակոբյանը կոչ է անում «միահամուռ ջանքերով» գրոհել ցարական ինքնակալության վրա, հիմքից կործանել տիրող բռնությունը և «կրրծքով պաշտպանել» բարձրացող ռևոլյուցիայի նվաճումները («Մե՛կ էլ, մե՛կ էլ», «Հեղափոխություն» և այլն)։ Բոլշևիկ բանաստեղծը անարգանքի սյունին է դամում բուրժուազիային՝ որպես ռևոլյուցիոն ազատագրական շարժումներն արգելակող ուժի։

Իր ստեղծագործության լեյտմոտիվը դարձնելով պրոլետարական ինտերնացիոնալիզմի պայծառ գաղափարը, Հ. Հակոբյանը հայ բանվորին մատչելի ձևով ծանոթացնում է «Կոմունիստական պարտիայի մանիֆեստի հռչակավոր կոչին, գրելով.

Պրոլետարնե՛ր, ողջ աշխարհի,
Ոտքի ելե՛ք միացե՛ք։ («Անուրջ»)։

Հ. Հակոբյանի պոեզիային արմատապես խորթ են նացիոնալիզմը, պեսիմիզմը, դեկադանսը, մեռնող դասակարգերին ու նրանց իդեոլոգներին հատուկ լալկանությունն ու վհատությունը։ Ռևոլյուցիայի բանաստեղծը անսասան կանգնած է եղել ռևոլյուցիոն պրոլետարիատի մարտական դիրքերում և անսահման հավատ է տածել հաղթանակի նկատմամբ։ Հակառակ ցարիզմի և բուրժուազիայի ստոր գործակալների, որոնք ճգնում էին հավատացնել աշխատավոր մասսաներին, թե ռևոլյուցիայի հաղթանակն անհնար է, Հ. Հակոբյանը բոլշևիկին հատուկ լավատեսությամբ հավատացնում էր հայ բանվորներին, որ «մոտ է ահա լավ օրը» («Դարբնի երգը»), որ կա և դարգանում է այն հզոր ուժը, որը հաղթելու է ճնշող բռնությանը, «խորտակելու կեղեքչի շղթան» («Ահա նորից ես») և ստեղծելու մի կյանք, ուր աշխատավոր մարդը «իր աշխատանքի կդառնա տերը և ուրախ ազատ կապրի բախտավոր» («Ես ձեզ ասում եմ...»)։

Հ. Հակոբյանի պոեզիան, որ մասսաներին դաստիարակում էր պրոլետարական ինտերնացիոնալիզմի և ռևոլյուցիոն օպտիմիզմի ոգով, իր սուր ծայրով ուղղված էր բուրժուական նացիոնալիզմի դեմ և անշուշտ խոշոր ծառայություն է մատուցել ռևոլյուցիայի ընդհանուր գործին։

Այս տեսակետից անկասկած խոշոր դեր են կատարել նաև հռչակավոր

ռևոլյուցիոն երգերի՝ «Ինտերնացիոնալի», «Վարշավյանկայի», «Մարսելյոզի» և մյուսների թարգմանությունները, որ կատարել է Հ. Հակոբյանը ռևոլյուցիայի նախօրյակին և տարիներին։ Դրանք, վերը նշված մարտական բանաստեղծությունների հետ միասին, տպագրվելով բոլշևիկյան մամուլի էջերում, առանձին քարտերի վրա, ինչպես նաև հնչելով ռևոլյուցիոն ցույցերի և միտինգների ժամանակ, օգնել են Անդրկովկասի բոլշևիկներին ցարական ինքնակալության, ռեակցիոն բուրժուազիայի և ամեն տիպի նացիոնալիստական պարտիաների և հոսանքների դեմ մղած պայքարում։

Ռուսական առաջին ռևոլյուցիայի տարիներին Հ. Հակոբյանի պայքարը բուրժուա-նացիոնալիստական իդեոլոգիայի և այդ իդեոլոգիան արտահայտող քաղաքական խմբակցությունների դեմ դրսևորվել է նաև նրա հրապարակախոսական հոդվածների մեջ, որոնք տպագրված են ժամանակի հայ պարբերական մամուլում։

Բուրժուազիան հանդես գալով ժողովրդի անունից, «հայրենասիրական», «ազգասիրական» ֆրազներով ձգտում էր պրոլետարիատին շեղել ռևոլյուցիոն ճանապարհից, իր սեփական գործը հրամցնելով համաժողովրդական գործի տեղ։

Բուրժուազիայի այդ ձգտումն արտահայտվում է դասակարգային պայքարի, գիտության և կուլտուրայի բոլոր ընագավառներում։ Այսպես, օրինակ, հանդես գալով դպրոցական խնդիրների կապակցությամբ, հայ բուրժուազիայի լակեյները ձգտում էին «ազգասիրական», «ժողովրդասիրական» ֆրազների տակ թաքցնել դպրոցները բուրժուազիային և ռեակցիոն հոգևորականությանը ծառայեցնելու իրենց միտումը։

1906 թվականին, հանդես գալով Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի հոգաբարձուների ընտրությունների կապակցությամբ իր «Ազգայի՞ն, թե՞ ժողովրդական դպրոց» հոդվածում, մերկացնելով լիբերալ և պահպանողական հոսանքների ներկայացուցիչներին, Հ. Հակոբյանը ցույց է տալիս, որ իրար դեմ նիզակ թափահարող այդ և դրանց նման հոսանքները բոլորն էլ ելնում են իշխող դասակարգերի շահերից և ծառայում այդ շահերին։

Ցույց տալով այդ բուրժուական հռետորների «ազգասիրական» ճառերի քուն էությունը, Հ. Հակոբյանն ապացուցում է, որ ազգ ասելով այդ բոլոր հռետորներն անտեսում են աշխատավոր ժողովրդին, որը տառապում է տաժանակիր աշխատանքի, անվերջ քաղցի և խավարի մեջ, և նկատի ունեն հայ բուրժուազիային, առևտրականությանը, խավարամոլ և ընչաքաղց հոգևորականությանը։

«Ժողովրդի անունից խոսող ազգասերներ,— գրում է Հ. Հակոբյանը,— նորից ձեզ ենք հարցնում, ո՞վ է, ուրեմն, ազգը և ի՞նչ եք հասկանում համայն ազգ, ազգություն պոռալով։

Նրա՞նք են արդյոք ազգի զավակ համարվում, որոնք «ազգասիրաբար» հարստահարում են իրենց սեփականազուրկ եղբորը, թե՞ այն հոգևորականությունը, որը պատուհասի պես ընկած ժողովրդի կրծքին պարազիտություն է անում. կամ գուցե նա՞, որ ֆաբրիկանտներից և վաճառատներից ապրանք գնելով բերում դարսում է իր խանութում և կրկնակի գնով ծախում հենց նույն ապրանքն արտադրող դասակարգի ընկերների— այն է բանվորության և գյուղացիության վրա։

Ազգասերը,— վերջացնում է Հ. Հակոբյանը,— այն էլ ամենալավ ազգասերը նա է, ով իսկական ճնշված դասակարգերի ընդհանուր շահերն է պաշտպանում, նրա կարիքների և զրկանքների մասին միայն միտք մաշում, այլ ոչ թե անխտիր ազգի ամբողջականության մասին ճառում, ուր գայլերը գառների հետ միասին ապրել երբեք չեն կարող[1]։

Պարզ է, որ Հ. Հակոբյանի այս մարտական ելույթը չպետք է գիտել որպես սոսկ հոդվածագրի անհատական կարծիքը։ Թեև որոշ նկատառումներով նա չի տալիս բոլշևիկների անունը, սակայն ակնբախ է, որ շարադրում է հենց բոլշևիկների, իր բառերով ասած՝ «իսկական ժողովրդական մարդկանց» կարծիքը։

Քննվող խնդրի տեսակետից խիստ հետաքրքրական է Հ. Հակոբյանի 1906 թ. գրած «Պրոլետարի հիշատակարանից» հոդվածը, որն իր սուր ծայրով ուղղված է դաշնակցականների դեմ։ Հոդվածում կոնկրետ փաստերով մերկացնելով դաշնակցության հակաժողովրդական դեմքը, նշավակելով նրանց դաժան էկզեկուցիաները, սանձարձակ չարագործությունները, Հ. Հակոբյանը միաժամանակ շեշտում է, որ այդ վայրագ շահատակությունները կատարվում են այսպես կոչված «ազատամիտ», լիբերալ-բուրժուական հոսանքի լռելյայն համաձայնությամբ և հովանավորությամբ, որ «ազատամիտների» դիմակի տակ թաքնված բուրժուական ինտելիգենտները, ըստ էության, ոչնչով չեն տարբերվում պահպանողականներից։ «Դաշնակցությունը,— գրում է Հ. Հակոբյանը,—բոլորովին նոր չէ, որ իր վայրագությունների չափ ու սահմանն անց է կացրել։ Նրա գավառներում կատարած ենիչարություններն ու բաշիբոզուկությունները գեթ այս վերջին տարվա ընթացքում ախարհք թնդացրին։ Դրանցից միայն մեր պարբերական մամուլում լույս տեսածները արդեն մի պատկառելի հատոր կարող են կազմել»։ Հ. Հակոբյանը զայրույթով շեշտում է, որ «ազատամիտ» մամուլը չի էլ մտածում դրանց մասին բողոք բարձրացնել, որ այդ դեպքերից ոչ մեկը չի զայրացնում «ազատամիտ» փաստաբաններին, բժիշկներին և այլ կարգի բուրժուական ինտելիգենտներին։ Դաշնակցական ավանտյուրիստների կողմից «Տեղ գյուղում կնոջ մերկացնելու և հրապարակով ծեծի ենթարկելու դեպքը,— գրում է Հ. Հակոբյանը,— որ կարծում ենք շատ ավելի զորավոր պիտի լիներ ցնցելու համար մեր ճարպոտած և զգայնությունը կորցրած ինտելիգենցիային, բոլորովին աննկատելի անցավ նրանց համար, գոնե ոչ ոք գրանցից արձագանք չտվեց մամուլի մեջ երևացած մի քանի հատ ու կտուր պատահական բողոքներին»[2]։

Պետք է նկատի ունենալ, որ այս հոդվածը գրված է այն ժամանակ, երբ Անդրկովկասի ռևոլյուցիոն շարժումները ջլատելու նպատակով ցարիզմը կազմակերպում էր ազգամիջյան եղբայրասպան կոտորածներ և այդ սև գործը կատարելու համար լայն իրավունքներ էր տվել իր տեղական գործակալներին, այդ թվում հայ կյանքի ցեցեր դաշնակներին, որոնք այսպես կոչված «դատավարություններ» էին կազմակերպում գավառներում, դաժանորեն ճընշում էին աշխատավոր գյուղացիության ռևոլյուցիոն ելույթները կալվածատերերի դեմ։

---

[1] Տես «Աշխատանք», 1906 թ., № 19։

[2] «Հոսանք», 1906, № 1։

* * *

Ստոլիպինյան դաժան ռեակցիայի և առաջին իմպերիալիստական պատերազմի տարիներին է՛լ ավելի սուր բնույթ ստացավ կոմունիստական պարտիայի անհաշտ պայքարը բուրժուական-նացիոնալիզմի ու սոցիալ-շովինիզմի դեմ։

1905 թվականի ռևոլյուցիայի պարտությունը տրոհում և քայքայում առաջացրեց ռևոլյուցիայի ուղեկիցների մեջ։ «Հանդես եկավ մոդայական գրողների մի ամբողջ բազմություն, որոնք «քննադատում» և «ջարդուփշուր» էին անում մարքսիզմը, թուք ու մուր էին թափում ռևոլյուցիայի վրա, ծաղրում էին ռևոլյուցիան, գովերգում էին դավաճանությունը, «անձնավորության կուլտի» անվան տակ գովերգում էին սեռական անառակությունը»[1]։

Կոմունիստական պարտիան մինչև վերջը ամուր ու անսասան կանգնած մնաց պրոլետարիատի ռևոլյուցիոն շահերի պաշտպանության դիրքերում, մերկացնելով պրոլետարիատի շահերին դավաճանող բոլոր և ամեն տեսակ պարտիաների և հոսանքների կոնտրռևոլյուցիոն էությունը, բարձր պահելով պրոլետարական ինտերնացիոնալիզմի դրոշը։

Հայ իրականության մեջ Հակոբ Հակոբյանը առաջին գրողն էր, որ ցարական ամենադաժան ռեակցիայի պայմաններում իսկ, երբեք չընկճվեց, չվհատվեց, ցած չդրեց ցարիզմի և բուրժուական նացիոնալիզմի դեմ ուղղված իր զենքը, իր գեղարվեստական մարտաշունչ ստեղծագործությունը այս էտապում ևս ծառայեցրեց ռևոլյուցիայի հաղթանակի գործին։

«Նահատակները», «Մաքառման ժամին», «Ոչինչ, իմ ընկեր», «Պահակը», «Ազգայիններին» և շատ ուրիշ բանաստեղծություններ, «Նոր առավոտ», «Կարմիր ալիքներ», «Հավասարություն» պոեմները դրա ցայտուն արտահայտությունն են։

Հակոբ Հակոբյանը համարձակորեն հայտարարում է, որ չնայած ծանր կորուստներին ու զոհերին, վրեժը կոփվում է, և պահանջում է, որ հեռանան, անհետանան շարքերից, ովքեր «մաքառման։ դեռ ընդունակ չեն»։ Նա խորին համոզմունքով հավատացնում է մարտնչող պրոլետարիատին, որ «ապագան մոտ է («Ոչինչ իմ ընկեր»)։

«Պահակը» մարտաշունչ բանաստեղծության մեջ Հ. Հակոբյանը լավ է բնութագրում իր դիրքորոշումը ռեակցիայի շրջանում, գրելով՝

Թող կորչեն ոգիք լքուն, վարանոտ,
Ես կանգնած եմ գեռ իմ դիրքի վրա,
Եվ ինչպես պահակ մինչ լույս առավոտ
Պիտի հսկեմ վեռ բարձունքը նրա։

«Նոր առավոտ» հիանալի պոեմը, որն արժանացել է Ստ. Շահումյանի և Ս. Սպանդարյանի բարձր գնահատականին, հայ գրականության մեջ մեծ կտավի առաջին գեղարվեստական երկն է, ուր հեղինակը բուրժուական գրողների ազգայնական մտայնությանը հակադրում է Ռուսաստանի և Անդրկովկասի բազմազգ պրոլետարիատի ռևոլյուցիոն պայքարի գաղափարը։ «Կարմիր ալիքներ» և «Հավասարություն» պոեմներում մենք արդեն ծանոթանում ենք Հ. Հակոբյանի հերոսներին, դրանք հայ, ռուս, վրացի, ադրբե-

[1] «Համ(բ)Կ պատմություն», 1950, էջ 135—136։

ջանցի պրոլետարներ են, որ, եղբայրական անքակտելի կապերով կապված միմյանց հետ, անձնվեր պայքար են մղում ցարիզմի և բուրժուազիայի բռնապետության դեմ, հանուն ռևոլյուցիայի հաղթանակի։

1916 թ. գրած «Ազգայիններին» բանաստեղծության մեջ բացահայտելով բուրժուական նացիոնալիզմի էությունը, Հ. Հակոբյանը բոլշևիկյան համարձակությամբ ընդգծում է այն անջրպետը, որ կա իր ռևոլյուցիոն պոեզիայի և «ազգայնական» գաղափարախոսության միջև.

Նման չեմ ես ձեր սիրելի պոետներին,
Ձեր քուրմերին երգս օտար — մի խորթ հնչուն.
Ես չուզեցա հաճոյանալ ձեր սրտերին,
Այս առօրյա, մեղկ ու թունոտ մղձավանջում։

Հետաքրքրական է, որ այս բանաստեղծության մտահղացումն ավելի հին է, առաջին տարբերակները գրված են դեռևս 1912 թվականին, և դրանց մեջ բանաստեղծության ոգին նույնն է. այսպես 1912 թ. ապրիլի 14-ին գրված մի անտիպ տարբերակի մեջ, նույն «ազգայիններին» դիմելով պոետն ասում է.

Ձեզ համար երբեք ես չեմ էլ երգել,
Խորթ եք ինձ համար,
Դուք իմ երգերը չեք էլ հասկանա,
Պողպատի ձայն է հնչում իմ երգից՝
Ձեր սրտին օտար,
Նրան կողջունի ով ցավ է քաշել,
Ձեզ օտար է նա[1]։

1917 թ. «Պայքար» թերթի 5-րդ համարում տպագրված «Մեր հույսը մեզ վրա» հոդվածի մեջ Հ. Հակոբյանն անդրադառնում է գրողների և գրականության ապահովման հարցին։ Հակադրվելով դաշնակցական բուրժուա-նացիոնալիստական և ամեն տիպի անկումային գրական հոսանքներին, այս հոդվածում Հ. Հակոբյանը պաշտպանում է պրոլետարական գրականության, նացիոնալիստական և լալկան-հոռետեսական մտայնությունից զերծ, ռևոլյուցիոն գրականության դատը։

Եթե դաշնակցության տխրահռչակ պարագլուխներից մեկը, թթու նացիոնալիստական գրչակ Ա. Ահարոնյանը կեղծավորաբար, իբր թե խոսելով «տառապյալ» հայ ժողովրդի անունից, պահանջում է, որ հայ գրողը նույնպես «տառապի ծով կարիքի մեջ» և ստեղծի «ազգի», «ազգության», «ցեղի» վիշտն արտահայտող գրականություն, եթե մյուս կողմից անկումային, պոռնոգրաֆիկ գրականության ներկայացուցիչները գտնում էին, որ գրականությունը կուշտ փորի գործ է, ապա հայ պրոլետարական գրականության հիմնադիրը տրամագծորեն հակառակ կարծիք է պաշտպանում։

«Այս երկուսից որի՞ն պիտի հարի ընթերցող պրոլետարը,— գրում է Հ. Հակոբյանը,— իհարկե, ո՛չ մեկին և ո՛չ մյուսին, որովհետև ինչպես ամեն մի հարցում, նույնպես և այս դեպքում գիտակից պրոլետարիատը ունի իր ուրույն, իր որոշ (ընդգծումը Հ. Հ.-ի) բուրժուական, կամ մանր բուրժուական տեսակետներին հակառակ, պրոլետարական տեսակետը»[2]։

[1] Երկան թանգարան, Հ. Հակոբյանի արխիվ, № 23։
[2] «Պայքար», 1917, № 5։

Այնուհետև. «Ինչ բուրժուազիայի տեսակետով բարոյական է, թույլատրելի է, շահավետ, պրոլետարիատի համար այդ նույնը ամորալ է, հակառակ և, ուրեմն, անթույլատրելի...»[1]։

* * *

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի պատմական հաղթանակից հետո, երբ Անդրկովկասում դեռևս սովետական կարգեր չէին հաստատված, հայ, վրաց և ադրբեջանական ժողովուրդները հեծում էին դաշնակցության, մենշևիկների և մուսավաթականների ազգակործան տիրակալության տակ։ Այդ ժամանակ, ահա, Անդրկովկասի բոլշևիկների ամրակուռ շարքերում հաստատորեն քայլող Հ. Հակոբյանը հանդես է գալիս մի շարք մարտական բանաստեղծություններով և հոդվածներով, որոնցում դիմակազերծ է անում Անդրկովկասի ժողովուրդների միջև երկպառակություն և թշնամանք հրահրող նացիոնալիստներին։

1920 թ. գրված «Հարճիկն ու աղջիկը» բանաստեղծության մեջ Հ. Հակոբյանն անարգանքի սյունին է գամում վրաց մենշևիկներին։

Շեշտելով նրանց ծախվածությունը միջազգային իմպերիալիզմին, Հ. Հակոբյանը գեղարվեստական ընդհանրացման մեծ ուժով ցույց է տալիս, որ նրանք, ինչպես և նրանց հայ, ադրբեջանցի գաղափարակիցները, պատրաստ են ամեն քայլափոխին վաճառել հայրենիքը՝ իրենց անձնական շահերը ապահովելու ստոր նպատակով։ Արխիվային փաստաթղթերից պարզվում է, որ այս բանաստեղծությանը հետևում են մինչև օրս ընթերցողներին անհայտ երկու ուրիշ բանաստեղծություններ՝ որպես սրա երկրորդ և երրորդ մասերը։ Դրանցից մեկի մեջ, որ կոչվում է «Դաշնակը», Հ. Հակոբյանը ոչնչացնող քննադատության է ենթարկում դաշնակցության ավանտյուրիստական քաղաքականությունը և ցույց է տալիս, որ հակառակ դաշնակցության բոլոր ջանքերին, ապագան պատկանում է աշխատավոր ժողովրդին.

Կհնչի վերջին փողը վճռական,
Դաշնակից փոշի չի մնա այն ժամ,
Ու թող նա երգի վանքի շարական
Իսկ ձեզ — իմ ողջույնը զոհեր տարաժամ[2]։

Քաղաքական այս պամֆլետների շարքը եզրափակվում է «Մուսավաթին» բանաստեղծությամբ, որի մեջ նույն սատիրայով բնութագրվում են ադրբեջանական ժողովրդի արյունարբու թշնամիները։

Նույն 1920 թ. Հ. Հակոբյանը գրել է մի շարք կրակոտ հոդվածներ դաշնակցական կեղտոտ թերթուկ «Աշխատավոր»-ի դեմ, որը փրփուրը բերանին լուտանքներ էր թափում Սովետական Ռուսաստանի հասցեին, պրովոկացիոն պայքար մղում նորաստեղծ Սովետական պետության դեմ։

«Պահակ», «Նոր ուղի», «Կարմիր աստղ» թերթերում տպագրված «Մամուլ», «Ձեր ճիգերը իզուր են», «Անտեղի վախ», «Բթամտություն, թե քծնանք», «Որն է բոլշևիկների և պանիսլամիստների պայմանագիրը», «Միակ ելքը», «Աշխա-

[1] «Պայքար», 1917 № 5։
[2] Գրական թանգարան, Հ. Հակոբյանի արխիվ, № 25։

տավորը» աշխատում է...» և այլ հոդվածներում Հ. Հակոբյանը կրակի տակ է առնում դաշնակներին և նրանց թերթուկը։

«Ձեր ճիգերը իզուր են», հոդվածում, որ գրված է 1920 թ. հունվարի 16-ին, Հ. Հակոբյանը մերկացնում է «Աշխատավոր»-ի գրչակներին, որոնք. պրովոկացիոն նկատառումներով խեղաթյուրված էին ներկայացնում լենինյան-ստալինյան ազգային քաղաքականությունը։ Բնութագրելով հայ նացիոնալիստների ստոր նպատակը, նա գրում է.

«Բայց ձեր ցավը այլ է, դուք շովինիստներին հատուկ նենգամտությամբ հարցին մոտենում եք պրովոկացիաների կանխամտածությամբ։ Մուֆթաների, սոփթաների և ուլեմների[1] ուրվականով վախեցնում հայ ընթերցողին՝ «կրոնական ֆանատիզմ», «եվրոպական քրիստոնեություն» գրգռող խոսքերը հանդես հանելով»[2]։

Բարձրացնող օպտիմիզմով նայելով ռևոլյուցիայի հաղթական երթին, Հ. Հակոբյանը կանխատեսում է ռևոլյուցիայի հաղթանակն Անդրկովկասում։

Լենինյան դիրքերից մոտենալով հարցին, նա Արևելքի, այդ թվում և Անդրկովկասի ժողովուրդների ազատագրության խնդիրը սերտորեն կապում է ռուս մեծ ժողովրդի ռևոլյուցիոն պայքարի հետ՝ ի հակակշիռ բուրժուա-նացիոնալիստական պարտիաների, որոնք իրենց ավանտյուրիստական պլանները կապում էին «քրիստոնյա Եվրոպայի», անգլո-ամերիկյան իմպերիալիզմի հետ։

Բոլշևիկ բանաստեղծը անխորտակ հավատ տածելով ռևոլյուցիայի անվերապահ հաղթանակի նկատմամբ մարտահրավեր է նետում նացիոնալիստներին։

«Որքան էլ աշխատեք խանգարել և մոլորեցնել մասսաներին—չեք կարող։ Մանուկ հսկան է գալիս։ Ձեր ճիգերը իզուր են»[3]։

* * *

Հ. Հակոբյանի պայքարը բուրժուական-նացիոնալիզմի դեմ, բնականորեն, չի թուլացել նաև Անդրկովկասում սովետական կարգերի հաստատումից հետո։ Հ. Հակոբյանի սովետական շրջանի ստեղծագործությունն ամբողջովին տոգորված է սովետական հայրենասիրությամբ, սովետական ժողովուրդների անխորտակելի բարեկամության բարձր գաղափարներով։ Ամենայն սրությամբ մերկացնելով հայ, վրաց և ադրբեջանական նացիոնալիստական պարտիաների և խմբակցությունների ազգակործան քաղաքականությունը, Հ. Հակոբյանը միաժամանակ ցույց է տալիս Սովետական իշխանության, լենինյան-ստալինյան իմաստուն ազգային քաղաքականության հսկայական դերն ու նշանակությունը ժողովուրդների ազգային վերածնության և սոցիալիստական զարգացման գործում։ Հ. Հակոբյանն առաջինն է մեզանում, որ երգելով սոցիալիստական շինարարությունը, սոցիալիզմի առաջին գիգանտ կառուցումները («Վոլխովստրոյ», «Բոլշևիկ է Շիր-կանալը», «Աստվածները խոսեցին» և այլն), Սովետական Միության նվաճումները դիտում է որպես մեր երկրի բոլոր ժողովուրդների սեփականությունը։ Հակադրվելով ժողովրդի ստոր թշնամիներին՝

[1] Մահմեդական հոգևորական կոչումներ։
[2] «Գահակ», 1920, № 12։
[3] Նույն տեղում։

բուրժուա-նացիոնալիստական կոնտրռևոլյուցիոն պարտիաներին, Հ. Հակոբյանը սովետական շրջանի իր ստեղծագործության լեյտմոտիվն է դարձրել սոցիալիստական ազգերի անքակտելի բարեկամությունը։ Նա որդիական ազնիվ սիրով երգում ու փառաբանում է Թիֆլիսն ու Բաքուն, Գյանջան ու Երևանը, եղբայրական Վրաստանի մայրաքաղաքն իրավամբ համարելով «Օջախ հարազատ, երկրորդ հայրենիք» («Թիֆլիս»)։

Բուրժուա-նացիոնալիստական պարտիաների, մենշևիկների, դաշնակների, մուսավաթականների դեմ ուղղված ստեղծագործությունների մեջ շատ հետաքրքրական է 1928—1929 թթ. գրված «Կույր աշուղը» պոեմը, որ անտիպ լինելով, մինչ այժմ անծանոթ է մեր հասարակությանը։ Պոեմում էպիկական մեծ շնչով և հրաշալի լիրիկական զեղումներով, որոնցում վարպետորեն օգտագործված են ժողովրդական բանահյուսության գեղեցիկ պատկերներն ու համեմատությունները, Հ. Հակոբյանը նկարագրում է 1920 թ. դաշնակների և մուսավաթականների կազմակերպած եղբայրասպան կոտորածները Շուշի քաղաքում, որոնց հետևանքով հազարավոր անմեղ մարդկանց արյուն թափվեց և հիմնահատակ արվեց քաղաքը։

Պրոլետարական ինտերնացիոնալիզմի դիրքերից խարանելով նացիոնալիստական ավանտյուրիստական այդ պարտիաներին, ցույց տալով նրանց ազգակործան քաղաքականությունն ու ստոր գործելակերպը, Հ. Հակոբյանը անարգանքի սյունին է գամում դաշնակցական և մուսավաթական պարտիաների պարագլուխներին, մերկացնում նրանց որպես ամեն մի բարոյականությունից զուրկ քաղաքական պոռնիկների, որոնք մարմնացնում են իրենց մեջ ստորությունն ու սադիզմը, կեղծիքն ու երկերեսանիությունը։ Բանաստեղծը կոնկրետ փաստերով ցույց է տալիս, որ սովետական հայրենիքից առմիշտ վռնդված այդ ճիվաղները, ինչպես և պետք էր սպասել, դարձել են իմպերիալիզմի լակեյներն ու կամակատարները։ Խղճից ու ամոթից զուրկ դաշնակ-մուսավաթյան ավանտյուրիստները, նկատում է Հ. Հակոբյանը, «մոռացել» են հայ և ադրբեջանական ժողովուրդներին պատճառած ծանր աղետները։ Այդ ժողովուրդների ոխերիմ թշնամիները ընդհանուր լեզու են գտել Սովետական իշխանության հանդեպ տածած իրենց ատելության հարցում և սրիկայաբար «գրկախառնվում են իրար հետ», «ազատ» Ամերիկայում, իմպերիալիստական Թյուրքիայում, Փարիզում և այլուր, շռայլում ժողովրդի արյան ու ալ.ցունքի գնով ձեռք բերած փողերը, լիզում ռեակցիոն իմպերիալիզմի ոտքերը՝ նրա օգնությամբ իրենց երազած «դրախտը» ձեռք բերելու սին հույսերով։

Կրակոտ տողերում նկարագրելով Շուշի քաղաքում կատարված եղեռնագործությունը, Հ. Հակոբյանը դաշնակ-մուսավաթականների ազգակործան քաղաքականությանը հակադրում է սովետական մարդկանց, բոլշևիկյան պարտիայի աշխարհաշեն քաղաքականությունը, որը հարություն է տալիս կործանված քաղաքներին, աշխատանքային աննախընթաց էնտուզիազմով կառուցում կոմունիստական հասարակարգ։ Պոեմի վերջում Հ. Հակոբյանը գրում է.

Սակայն գիտեմ, մոտ է այն օր,
Երբ իմ Շուշին կելնի ոտքի,
Սովետական աշխուժով նոր,
Նա մեր սիրած երգը կերգի։

Չէ՞ այն մենք ենք, որ տվինք կյանք,
Տասնյակ նման Շուշիների,
Եվ թող լինի այս նոր ապտակ
Մուսավաթյան-դաշնակներին[1]։

Քննվող հարցի տեսակետից ոչ պակաս կարևոր են սովետական պարբերական մամուլում տպագրված Հ. Հակոբյանի մի շարք ակնարկներ ու հրապարակախոսական հոդվածներ, ինչպես նաև ինքնակենսագրական նյութեր, որոնց մեջ նա մերկացնում է բուրժուական նացիոնալիստական թափթփուկներին («Նախառևոլյուցիոն շրջանի հայ բոլշևիկյան մամուլը», «Ագիտատորի հուշերից» և այլն) և հրճվանքով նկարագրում սոցիալիստական Հայրենիքի ծաղկումը («Դնեպրոստրոյ», «Բորժոմն ու իր գործարանները», «Խորհրդային Վրաստանի 15-ամյակին» և այլն)։

* * *

Այս բոլորից հետո միանգամայն հասկանալի է, թե ինչու ռևոլյուցիայի մեծ բանաստեղծը գրական ասպարեզ իջնելու հենց առաջին օրից եղել է բուրժուա-նացիոնալիստական լիբերալ և պահպանողական իդեոլոգների քննադատության օբյեկտը։ Սկսած բուրժուական «Մշակ»-ից մինչև կղերա-պահպանողական «Նոր-դար»-ը, սպեցիֆիկյան տխրահռչակ «քրեական տիպ» Ռ. Իշխանյանից մինչև դաշնակցական գրչի ավազակ Ա. Ահարոնյանը միասնական ճակատ են կազմել պրոլետարական մեծ բանաստեղծի դեմ, ճգնել են նսեմացնել նրա ստեղծագործության արժեքը։

Պատահական չէ, որ ականավոր բոլշևիկներ Ստ. Շահումյանն ու Ս. Սպանդարյանը այնքան ջերմորեն պաշտպանել են Հ. Հակոբյանի պոետիան, դատապարտել բոլոր նրանց, ովքեր Հ. Հակոբյանին չեն ցանկացել ճանաչել որպես ժողովրդական մի ամբողջ խավի՝ հայ բանվորության մեծագույն բանաստեղծը, որը կոփվել ու զարգացել է բուրժուա-նացիոնալիստական ռեակցիոն ուժերի ու հոսանքների դեմ մղված պայքարի բովում և նոր էտապ բացել հայ գրականության պատմության մեջ։

Հ. Հակոբյանի իդեապես հագեցած, քաղաքականապես նպատակասլաց, բարձրարվեստ ստեղծագործությունը ամբողջովին պահպանել է իր ուժն ու հմայքը և այսօր ևս հանդիսանում է մի հզոր զենք՝ ռեակցիոն իմպերիալիզմի և բուրժուական նացիոնալիզմի դեմ, հանուն խաղաղության մեր ժողովրդի մղած պայքարում։

---

[1] Գրական թանգարան, Հ. Հակոբյանի արխիվ, № 51։